


† ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

Հայ գրականության պատկառելի գործիչներէն մին եւս կորսնցուցինք յանձին
Ղազարոս Աղայեանի († 3 Յուլիս):

Աղայեան իբրեւ ուսուցիչ եւ դաստիարակիչ «Մայրենի Լեզուի», գեղեցիկ դա-
սագրքերով, եւ իբրեւ քանաստեղծ վիպագիր շարք մը հատորիկներով մատուցած էր
անգնահատելի ծառայութիւն մը հայ նոր սերնդեան կրթութեան գործին մէջ եւ նո-



րագոյն ազգային գրողներու թուին մէջ գրաւած պատշաճ աթոռ մը: Իր յանկարծա-
կան կորուստը թէեւ ալեւորեալ տիոց մէջ՝ զգալի հարուած էր հայ սրտերուն հա-
մար, որոնց ներուի մեզի հոս յայտնել մեր անկեղծ ցաւակցութիւնները:

Հանգուցելոյն գրական եւ հասարակական արդեանց վրայ՝ առթիւ 40ամեայ
յոբելիսի՝ գեղեցիկ ակնարկ մը կրնան գտնել մեր ընթերցողները Ուսումնաթերթին
1902 Յուլիս թուին մէջ (էջ 210—212):

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԻՍԻ»,